



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

37

25.670

արարան «Յանազ»-ի

№ 21

HACIK MASHUGHIAN

ՄԻ ԶՐՈՅՑ

ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. ուսու. Լ. Ն.

333.5
Մ-67

2-րդ. - հարար

1906

Թ Ի Յ Լ Ի Զ

05 JAN 2010

ANNEXE
48

№ 21

Գրադարանի «Յանազ»-ի

№ 21

333.5

Մ-67

մ6



1387

Մ Ի Զ Ր Ո Յ Ց

ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

206

Քարգմ. ոռու. 1. Ն.

1906

ԹԻՖԼԻՍ

(5973)

287

28 JUN 2013

25670



HAGIK MANUJIAN

ՄԻ ԶՐՈՅՑ ՀՈՂԻ ՄԵՍԻՆ

Պօլտավայի նահանգի Լիպովկա գիւղում հարևան կալածատէրը սկսեց չայլ ևս գիւղացիներին կապալով (իջարայով) հող չը տալ. ինքն ուղեց վարել իր արնտեսութիւնը վարձու բանւորներով: Ինչպէս ամբողջ Ռուսաստանումն է, Լիպովկա գիւղումն էլ գիւղացիների հողն իրենց բաւական չէր, ուստի կալածատիրոջ որոշումը նրանց սարսափեցրեց:

Ի՞նչ անեն: Վեր կացան եկան կալածատիրոջ մօտ հող խնդրելու: «Շնորհ արէք, պարոն,—ասացին նրանք,—տէք մեզ հող գոնէ դարնանավարի համար. մենք կը վճարենք ձեզ առաջւայ նման»:

«Ձեմ կարոյ, տղերք,—ասաց կալածատէրը.—ես ինքս էլ գիտեմ, որ առանց իմ հողի ձեզ համար գժւար է գլուխ պահել. բայց ի՞նչ արած, չէ՞ որ ինձ ձեռնաու չէ այդ. ես աւելի օգուտ կունենամ, եթէ ինքս մշակեմ»:

Գիւղացիների մէջ լսեցին այսպիսի ձայներ. «է, ի՞նչ էք մեզ ճնշում. չէ՞ որ առանց կապալով վերցրած հողի ապրելու հնար չը կայ»:

«Ինչո՞վ եմ ճնշում ձեզ,—պատասխանեց կալածատէրը,—հօ ձեր ունեցածին չեմ դիպչում. ես միայն իմ ունեցածն այնպէս եմ կարգադրում, ինչպէս ինձ համար աւելի լաւ է. ի՞նչ վիրաւորանք կայ այստեղ»:

Գիւղացիները չը գիտէին, ինչ պատասխանեն:

Ք ի Յ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐԱԼԷՍ» Մադարեան փող. № 5

1906

(209)



10731-57

«Ասենք, այդ իսկապէս այդպէս է—համաձայնում էին նրանք,—բայց ախր դէ մեր դրուժինն էլ առանց հողի անտանելի է»:

Այդ գիւղում կար մի վարժապետ, որը խղճաց գիւղացիներին. նա էլ գնաց կալւածատիրոջ մօտ համոզելու, որ սա հող տայ գիւղացիներին. «գիւղացիները շատ աղքատ են» —ասում էր վարժապետը:

«Ի՛է ես ի՛նչ մեղաւոր եմ, որ աղքատ եմ» — պատասխանեց կալւածատէրը. «ինքներդ դատեցէք, պարոն վարժապետ. ճշմարիտ, ինձ փրաս կը լինի, եթէ հողս կապալով տամ, իսկ ես ծախքեր՝ շատ ունեմ: Եւ եթէ նրանք, ինչպէս դուք ասում էք, այդքան աղքատ են, աւելի լաւ է նրանց մի-մի ըուբլի բաշխեմ, իսկ հող տալ ոչ մի կերպ չեմ կարող»:

Վարժապետն էլ չը գիտէր, ինչ պատասխանի այդ խօսքերին. հողն իսկապէս կալւածատիրոջն է. այն էլ ճիշտ է, որ կալւածատէրն ուրիշի ունեցածին չի դիպչում, այլ միայն իր ունեցածն է կառգադրում: Ահա հէնց այդ գիւղում մի գիւղացի մօտ ինը խալվար հող ունի, և նա էլ է կարգադրում այդ հողն իր քէֆն ուղածի պէս. ո՞վ կարող է նրան բան ասել, ամեն մարդ կարգադրում է իր ունեցածը. մէկն ունի հինգ հարիւր խալվար, միւսը՝ ինը:

Բայց եկէք ու տեսէք, որ հէնց այդ գիւղում երեսուն չորս տունը միայն մի-մի սօմարից մինչև հինգ սօմար վարելահող ունեն, իսկ մնացած երեսուն երկու տունը վարելահող բոլորովին չունեն, այլ ունեն միայն տնատեղ ու կալատեղ: Ապա սրանք ինչ անեն. ի՛նչ կերպ վճռեն այս գործը. ո՞րն է արդար և ո՞րը մեղաւոր: Կալւածատէրն ասում է, որ նա արդար է, որովհետև ուրիշի ունեցածին չի դիպչում, այլ միայն իր

ունեցածի հետ է վարւում այնպէս, ինչպէս ինքն է ուղում. բայց չէ՞ որ գիւղացիներն էլ արդար են, որովհետև առանց հողի նրանք մեռնում են սովից, առանց հողի նրանք բոլորովին չեն կարող գլուխ պահել:

«Ի՛է որ այդպէս է, թող գնան կալւածատիրոջ մօտ աշխատեն, թող նրա մօտ բանւոր վարձեն» — այսպէս կասեն խելօք մարդիկ:

Այդ իրենք գիւղացիներն էլ են հասկանում. կարիք չը կայ նրանց այդ սովորցնելու:

Բայց հէնց բանն էլ նրանումն է, որ կալւածատէրը մեքենաներ է ձեռք բերել և իր երկրագործական աշխատանքները մեքենաներով է կատարում. նրան այժմ հարկաւոր են աւելորդ բանւորներ ոչ թէ ամբողջ գիւղի վաթսուն վեց տնից, այլ միայն մի քանի մարդ, մօտ քսան հինգ հոգի. դրանց էլ նա նշանակում է այնպիսի վարձ որ նրանք հազիւ կարողանան միայն իրենց համար հագուստ ձեռք բերել և թագաւորական հարկերը վճարել, իսկ ընտանիքը կերակրել անհնարին է. ապա մնացածները. նրանք ուր գնան, ինչ անեն:

Գիւղացիներին այդպիսի խորհուրդներ տւող խելօք մարդկանց այն էլ պիտի ասել, որ կալւածատիրոջ օգտին աշխատելը բոլորովին չէ նշանակում լինել ազատ հողագործ: Ճորտ գիւղացիներն էլ էին աշխատում կալւածատիրոջ համար, բայց դէ չէ՞ որ նրանք այժմ ազատ մարդիկ են դարձել. ուրեմն նրանք պիտի ունենան իրենց սեփական հողը, թէ չէ առանց հողի նրանք ստիպւած են դարձեալ ճորտ, ստրուկ դառնալ. օրինակ, նրանցից մի քանիսը գնում են աշխատելու կալւածատիրոջ համար, մի քանիսը գնում են աշխատելու գործարանում գործարանատիրոջ համար, մնացածն էլ հէնց ուղղակի մեռնում-կորչում են սովից, անիծելով իրենց

չարքաշ կեանքը: Ի՛է ասէք, ինչդրեմ, այդ ի՛նչ ազատութիւն է:

Դուքս է գալիս ուրեմն, որ արդարը գիւղացիներն են, որովհետեւ առանց հողի միւնտյն է, թէ չապրեն աշխարհիս երեսին: Ասենք ճիշտ է, որ նրանց չէն սպանում մի անգամից, մի հարւածով, բայց ի՛նչ օգուտ. այսպէս թէ այնպէս նրանց կեանքը մաշում են, վերացնում են նրանց այս աշխարհից ծանր աշխատանքով, վատ կերակրով, կամ հէնց ուղղակի քաղցած պահելով: Մի՞թէ մենք չը գիտենք, թէ ինչպէս գիւղերում մարգիկ մեռնում են աղքատութիւնից և սակաւնորութիւնից, այսինքն քիչ հող ունենալուց: Եւ դրանից յետոյ ինչպէ՞ս չաշխատեն գիւղացիները հող ստանալու կալւածատիրոջից: Եւ ա՛նա նրանք գալիս են հարուստ հողատիրոջ մօտ, նրանից հող են խնդրում գոնէ կապալով. իսկ նա ասում է, թէ այդպէս իրեն ձեռնառու չէ, թէ նա ուզում է մշակներ վարձել և ինքն է կամենում վարել իր անտեսութիւնը: Իհարկէ, նա այդպէս կանի, որովհետեւ հողը, ասում է, իմն է և ես կարողեմ անել այնպէս, ինչպէս քէֆս կուզի, ինչպէս ինձ համար աւելի օգտաւէտ կը լինի: Իսկ իր ծախքերը, ասում է, շատ մեծ են. միայն կնոջ շորերի համար տարեկան եօթ-ութ հարիւր ըուրլի է հարկաւոր. և առհասարակ, մի՞թէ նա քիչ ուրիշ ծախքեր ունի. դէ հօ նա գիւղականի նման չի՞ ապրում. հէնց միայն մի ճաշը նրան օրական հինգ-վեց ըուրլի է նստում:

Ահա թէ ինչու է հարուստ կալւածատէրը կարծում, որ ինքն էլ արդարացի է. չէ՞ որ նա ուրիշի ունեցածին չի գիպչում, այլ միայ իրենին:

Ի՛է հիմա դուք ասացէք, բարի մարգիկ. դուք ինչպէս էք կարծում, արդար է նա թէ՞ անարդար:

Ահա խերսօնի նահանգում ապրում է մի հարուստ կալւածատէր. դա ունի տաս հազար խալվար հող. և ա՛նա հաշուել է, որ իր համար աւելի օգտաւէտ է չը վարել հողը, այլ այդ հողի վրայ ոչխար պահել. իսկ յետոյ, ասում է, միան ու բուզը կուղարկեմ ուրիշ երկիրներ ծախելու: Հէնց այդպէս էլ արեց. իր բոլոր կապալառուներին քչեց հողերից և արձակեց բոլոր մշակներին. թողեց միայն մի քսան հովիւ և վարձեց մի քանի պահապան: Ու այնուհետեւ նա համ աւելի օգուտ ունի, համ էլ քիչ գլխացաւանք: Այդ ոչխար պահող կալւածատէրն էլ է ասում, որ ինքն արդար է. չէ՞ որ հողն իր սեփականն է, իսկ թէ գիւղացիներն ինչ կը լինեն, դա իր գործը չէ. թող գնան ուրիշ կալւածատէրերի մօտ գործ փնտրեն: Իսկ միւս կալւածատէրերը հէնց այդ էին ուզում. նրանք միայն ուրախ են այդ բանին. ինչքան շատ քաղցածներ լինեն, այնքան աւելի հեշտ է այդ կալւածատէրերի համար էժան մշակ գտնել:

Ապա թող գիւղացիներն իրենց սեփական հողն ունենային. մի՞թէ նրանցից մէկն ու մէկը կերթար աշխատելու հարուստ կալւածատիրոջ համար: Ի՛նչ գին ասես որ չուզէր այն ժամանակ գիւղացին, իսկ հիմա իրենք են գնում ու դեռ գլուխ էլ են իջեցնում կալւածատիրոջ առաջ. «Հնորհ արա, պարոն,—ասում են նրանք,—վերցրու մեզ գործի թէկուզ մի կտոր հացի համար»:

Այսպէս ուրեմն, դուքս է գալիս, որ կալւածատիրոջ համար ուղղակի ձեռնառու է քչել իր հողերից գիւղացիներին և նրանց տեղը ոչխար կամ այլ անասուն պահել: Եւ ինչո՞ւ չը պիտի այդպէս անեն կալւածատէրերը. հողն իրենցն է, չէ՞:

«Այդ ճիշտ որ այդպէս է,—մտածում են իրենք իրենց գիւղացիները,—բայց էլի կարծես որ այդպէս չէ, ինչ որ բան կայ»: Հարեան գիւղացիները գոնէ համարում են այդ ոչխար պահողին իրենց տունը քանդող շատ մարդկանց է նա գցել սաստիկ թշուառութեան մէջ, շատերի էլ մինչև անգամ կեանքի թելն է կտրել: Իսկ այնպէս, կարելի է ասել, որ իսկի վատ մարդ էլ չէ. չար չէ ու մարդու հետ էլ հաշտ ու խաղաղ վարւել գիտէ. և հէնց այնպէս է խօսում, ինչպէս մեր յիշած պօլտաւացի կալւածատէրը. «Ինքներդ ասում է, դատեցէք. ինչո՞վ եմ ես մեղաւոր, որ գիւղացիները հող չունեն. դէ հօ ես ուրիշի ունեցածին չեմ դիպչում. իսկ հողը—իմ սեփականութիւնն է»:

Այ հէնց այստեղ, միայն այդ մի խօսքի, սեփականութիւն ասած բանի մէջն է թագնւած ամբողջ հանելուկը: Եթէ մենք համաձայնենք կալւածատիրոջ հետ, որ հողն իր սեփականութիւնն է, այն ժամանակ նա, իհարկէ, արդար կը լինի. այն ժամանակ նա կարող է համարձակ կերպով քշել գիւղացիներին այդ հողից թէկուզ դժոխքը և նրանց տեղը ոչխար պահել:

Շատ մարդիկ այժմ հէնց այդպէս էլ կարծում են. շատերը ենթադրում են, որ հողը կարող է մի մարդու պատկանել, նրա յաւիտենական սեփականութիւնը կարող է գառնալ: Ի՞նչ ենք ասում շատերը. համարեա բոլորն են այժմ այդպէս կարծում, մինչև անգամ հէնց իրենք գիւղացիներն էլ: Ամեն մի գիւղում կը գտնուեն այժմ այնպիսի գիւղացիներ, որոնք ասում են հողը և դարձնում իրենց սեփականութիւն. կան այնպիսիները, որոնք ութ-ինը խալվար են ձեռք գցում, կան այնպիսիներն էլ, որոնք ամբողջ քսան-քսանհինգ խալվար, մի խօսքով, ով ինչքան կարող է: Իսկ հարեանները, նայե-

լով զրանց, միայն նախանձում են. և ամեն մէկը նրանցից ինքն իրեն մտածում է. «Ա՛յ թէ ինձ էլ աջողէր մի այդպիսի բան»: Շատ քիչ մարդ է պատահում, որ մտածէր, թէ որքան վատ ու անարդար բան է հողի սեփականութիւնը. շատ քիչ մարդ է պատահում, որ հասկանար այժմ, որ հէնց դրա մէջն է թագնւած գիւղացիները բոլոր ցաւերի պատճառը, որ այդ երկու խօսքը, այսինքն «հողի սեփականութիւն» ասած բանն է գիւղացու թշուառութեան աղբիւրը:

Շատ քչերն են հասկանում այժմ այդ բանը. բոլորն էլ կարծում են, որ հէնց այդպէս էլ պիտի լինի: Այ երբ մի որ և է հարուստ կալւածատէր զրկում է միանգամից ամբողջ գիւղը արօտատեղից կամ խոտատեղից, կամ յանկարծ բարձրացնում է կապտաւարձը, այն ժամանակ գիւղացիները վեր են քաշում իրենց ուսերը. «ախր ի՞նչպէս. ի՞նչպէս պիտի այժմ ապրենք»: Իսկ նրանց պատասխանում են. «Ի՞նչ է, ի՞նչ պատահեց որ. մի՞թէ ես սեփականատէր չեմ. մի՞թէ չեմ կարող վարւել իմ ունեցածի հետ այնպէս, ինչպէս ինքս եմ կամենում»: Եւ գիւղացիները այդ գէպքում չեն իմանում, ինչ պատասխանեն. իսկայէս, ոչ մի նոր բան չէ պատահել:

HACIK MANUGHIAN

Առաջ կալւածատէրը հինգ հարիւր խալվար հողի տէր էր, այժմ էլ նա նոյն հինգ հարիւր խալվարի տէրն է. առաջ նրանց համագիւղացի Անտօնը քառասուն խալվար հող ունէր, այժմ էլ նա նոյն հողն ունի. և ոչ ոք զրանում դարմանալու բան չի գտնում. ամեն մէկը կուզէր հէնց ինքն էլ այդպիսի մի սեփականատէր—հողատէր լինել:

Եւ անա այժմ այդ սեփականատէրը քշել է նրանց իր հողից. «գնացէք, ուր ուզում էք,—ասում է հողա-

տէրը, — ես ձեզ հետ գործ չունեմ. միթէ ես չեմ կարող կարգադրել իմ ունեցածը»:

«Ասենք, այդ իսկապէս այդպէս է, — կրկնում են զիւրացիները, — բայց դէ մեր դրութիւնն էլ առանց հողի անտանելի է...»

«Ախր ինչո՞ւ է վատ, է՞»:

«Բա դէ ինչպէ՞ս ապրենք առանց հողի...»

Ահա թէ ինչ, բարեկամներ, ինչ ուզում էք արէք, բայց երկուսից մէկը պիտի ընտրէք. կամ պիտի բոլորը միասին լինեն հողի տէրը, այսինքն ամբողջ հասարակութիւնը, ամբողջ ժողովուրդը, այնպէս որ ամեն մէկը, ով ուզում է աշխատել, կարողանար օգտուել այդ հողից, — կամ թէ չէ հողը պիտի բաժան-բաժան անել, տալ առանձին մարդկանց, դարձնել անձնական սեփականութիւն, առնել ու ծախել հողը, ինչպէս ամեն մի այլ ապրանք: Կամ մէկը, կամ միւսը. իսկ միացնել այդ երկուսը մի տեղ՝ ոչ մի կերպ չի կարելի:

Ինքներդ մտածեցէք. եթէ բոլոր հողը բաժանուած է գանազան մարդկանց մէջ, մէկին տրւած է հարիւր խալվար, միւսին՝ հազար և այդ յաւիտեանս նրանց սեփականութիւնը պիտի լինի, այն ժամանակ որտեղից պիտի հող գտնուի Ռուսաստանի մնացած զիւրացի — հողատէրերի համար էլ: Եթէ այդպէս լինի, այն ժամանակ հողն այլևս չի լինում ամբողջ ժողովրդի ընդհանուր կերակրողը, այլ դառնում է միայն կալւածատէրերի անձնական կայքը: Այն ժամանակ դուք այլևս տեղ չունէք այս աշխարհում, այն ժամանակ դուք բոլորդ այդ կալւածատէրերի ձեռքումն էք: Եթէ նրանց համար ձեռնըտու է հողը կապալով տալ, դուք դեռ էլի մի կերպ կարող էք ետև գնալ. իսկ եթէ նրանց համար աւելի ձեռքնառու է մեքենաներ գնել կամ իրենց վարելահողերը

դարձնել արօտատեղեր, այն ժամանակ դէ իհարկէ նրանք կը քշեն ձեզ իրենց հողերից:

Հէնց այդ է, որ նշանակում է «հողի սեփականութիւն»: Այդ դուք պիտի լաւ հասկանաք. այդ սեփականութեան մէջն է հէնց ձեր ամբողջ զիւրացիական ցուրը:

Վատ է այժմ զիւրացիների հայր. այդ ամենքը զիտեն ու տեսնում են, իսկ բոլորից լաւ զիտեն այդ հէնց իրենք զիւրացիները. բայց թէ ինչո՞ւ է նրանց հայր վատ, այդ շատ քչերն են հասկանում, և ամենից քիչ հասկանում են դարձեալ իրենք զիւրացիները: Ամեն կողմից հէնց միայն գանգատներ են լսւում, թէ զիւրացիները քիչ հող ունեն, թէ նրանք ոչ մի ելք, ոչ մի ճար ձուռնեն:

Կարելի է կարծել, թէ արդարև Ռուսաստանն այնպիսի նեղածք է դարձել, որ այնտեղ ապրելն անհնարին է. սակայն, միևնոյն ժամանակ ուր որ նայես՝ հարիւրաւոր վերստերի տարածութեան վրայ ձգւած են մասնաւոր մարդկանց կալւածներ և թաղաւորական անձնակ հողեր: Գիտէք, եթէ մինչև անգամ չը հաշուենք Սիբիրը և բոլոր հիւսիսային ցուրտ նահանգները, Ռուսաստանում առանց այդ տեղերի էլ ամեն մի յիսուն խալվար յարմար հողին ընկնում է ընդամենը երեսուն մարդ. իսկ Ֆրանսիայում, օրինակ, նոյնքան հողին ընկնում է ութսուն մարդ, և դեռ էլի զիւրացիներն այնտեղ ապրում են շատ աւելի լաւ, քան Ռուսաստանում: Ուրեմն բանը նեղածք լինելու մէջ չէ, Ռուսաստանում հողն ամենքին էլ բաւական կը լինէր, եթէ զաւթած ու սեփականութիւն դարձրած չը լինէր, եթէ նրանից կարողանային օգտուել բոլոր հողագործները: Թէ չէ դուրս է գալիս, որ մի կարգ մարդկանց համար նեղածք է, իսկ միւսների համար դեռ չափազանց ընդարձակ էլ է:

Գիւղացու չորս-հինգ հողուց բաղկացած ընտանիքը կուշ է գալիս մէկ-երկու խալվար հողի վրայ, իսկ ահա մի որ և է կոմս Օրլով-Գաւրիլովի կամ վաճառական Ռազուվաեվի ընտանիքը բազմել է մի քանի հազար խալվար հողի վրայ:

Իսկ ինչո՞ւ է այդպէս: Որովհետև հողը կարելի է եղել դարձնել յաւիտենական սեփականութիւն: Բաւական է, որ այդ թողրատուած է, և գործն անսպասձառ պիտի այնպէս գնայ, որ մի քանի մարդկանց ձեռքում կը հաւաքւեն աճազին կալւածներ, իսկ աշխատաւոր ժողովրդին չեն մնալ ոչ արօտատեղեր, ոչ խոտատեղեր, ոչ էլ մինչև անգամ կերակրելու համար անհրաժեշտ վարելահող:

Վերցնենք, օրինակի համար, Թէկուզ հէնց նոյն համագիւղացի Անտօնին: Սկզբում նա պարապում էր մանրը սուտարով, բուրդ էր գնում և այլն. իսկ յետոյ, յետ գցելով մի փոքրիկ գումար, նա սկսեց հողեր գնել, և ահա այժմ նրա ձեռքին կայ արդէն մի ամբողջ գիւղ, մօտ յիսուն խալվար հողով: Բայց գործը դեռ գրանով չի վերջանալու. նա ունի մօտ յիսուն խալվար, իսկ նրան կից ապրում են գիւղացիներ, որոնք բոլորովին հող չունեն. ուրեմն նրանք պիտի գնան Անտօնի մօտ աշխատելու: Ամեն մի բանւոր կը վարի, կը ցանի, կը հնձի, խօսքի համար, հարիւր բուրլու, իսկ Անտօնը այդ բոլորի համար կը վճառի նրան ընդամենը յիսուն բուրլի, իսկ մնացած յիսունը կը գնի իր գրպանը: Եթէ հանենք այդ յիսուն բուրլուց տաս բուրլի սերմացուի և այլ ծախքերի փող, և ահա դուրս կը գայ, որ ամեն մի բանւոր-գիւղացուց Անտօնին գուտ օգուտ է ընկնում տարեկան քառասուն բուրլի. իսկ չէ՞ որ Անտօնը վարձում է տասնութինգ-քստն մշակ, ուրեմն նա ստանում

է մշակներից տարեկան վեց հարիւրից մինչև ութ հարիւր բուրլի գուտ արդիւնք: Իրենց ստացած վարձով նրա մշակները հազիւ միայն իրենք կերակրւեն, այն էլ վախճաչարի, իսկ Անտօնը, իհարկէ, փող յետ կը գցի:

Իսկ ինչո՞ւ է այդպէս. էնդուր համար, որ նա իր ձեռքին հող ունի, իսկ գիւղացիները գուրկ են հողից. և ահա նրանք էլ ստիպւած պիտի գնան պարոն Անտօնի մօտ աշխատելու: Իսկ նրան էլ հէնց այդ է հարկաւոր:

Եթէ գիւղացին աշխատէր իրեն համար, նա կը ստանար իր աշխատանքի համար լրիւ այն բոլորը, ինչ որ կը բերէր հողը, առանց մի բան հօնելու ստացւածքից: Բայց այժմ նա աշխատում է ոչ թէ իրեն, այլ Անտօնի համար, իսկ Անտօնը տալիս է նրան արդէն ոչ բոլորը, ինչ որ բերում է հողը, այլ միայն կէսը, իսկ միւս կէսը թողնում է իրեն, իբրև պարգևայն քանի համար, որ ինքը հողի սեփականատէրն է:

Շնորհիւ այն բանի, որ ինքը հողի սեփականատէրն է, նա ստիպում է հողագուրկ գիւղացիներին աշխատել իրեն համար և նրանցից օգուտ է ստանում. իսկ այդ օգուտով նա հարստանում է, աւելացնում է իր փողը, ուրեմն կարող է էլի հող գնել: Իսկ որքան նա աւելի շատ հող ունենայ, այնքան աւելի հողագուրկ գիւղացիներ կարող է բանեցնել իրեն համար և այնքան աւելի շատ օգուտ կը ստանայ նրանցից: Այդպէս էլ կերթայ անվերջ, մինչև որ նրա ձեռքը մի քանի հազար խալվար հող չընկնի:

Քանի որ Անտօնը հող չունէր, շրջում էր գիւղերում, բուրդ էր գնում, տանում էր բուրդը քաղաքում ծախում ու այստեղից բերում գիւղացիների համար հարկաւոր ապրանքներ, մի խօսքով, մարդն իր համար աշխատում էր այնպէս, ինչպէս կարող էր. ճիշտ

է, այն ժամանակ էլ գործն առանց խաբեբայութեան
 չէր լինում, որովհետեւ Անտօնը կամ ապրանքը կշռելու
 ժամանակ էր սատանայութիւն տնում, կամ օգտուում
 էր նրանից, որ հարկ տալու համար գիւղացուն փողը
 շատ է հարկաւոր, ու բրդին կէս զին էր վճարում. մի
 խօսքով, դեռ առաջ էլ Անտօնը փող էր դատում կէս
 իր սեփական աշխատանքով, կէս խաբեբայութեամբ.
 Բայց այն ժամանակ նա այնուամենայնիւ չէր կարող
 ստիպել ուրիշ գիւղացիներէ աշխատելու իրեն համար.
 Դրա համար նա պիտի հող գնի, հող ունենայ, այսինքն
 այնպիսի մի բան, առանց որի բանւոր մարդը ոչ մի
 կերպ չի կարող եօլա գնալ: Ախր դէ մարդիկ ապրում
 են միայն աշխատանքով, իրենց սեփական կամ ուրիշ-
 ենի: Որպէս զի մարդ չը մեռնի սովից ու ցրտից, նա
 պիտի աշխատի, իսկ աշխատանքի համար նրան հարկա-
 ւոր է հող կամ այն, ինչ որ ստացուում է հողից, օրինակ՝
 փայտ, վուշ, բամբակ, երկաթ, այսինքն դարձեալ հէնց
 նոյն հողը: Իսկ մենք տեսանք, որ հողը սեփականու-
 թիւն է դարձրած: Սեփականատէրը կարող է տալ իր
 հողը աշխատաւոր մարդուն, կարող է և չը տալ: Ու-
 րեմն նրա ձեռքին է բանւոր մարդկանց կեանքն ու մա-
 հը: Ու անա նա տալիս է գիւղացիներին հող, թոյլ է տա-
 լիս նրանց աշխատել այդ հողի վրայ, բայց միևնոյն ժա-
 մանակ վերցնում է նրանցից այն ամենի կէսը կամ եր-
 կու երրորդ մասը, ինչ որ նրանք ստանում են հողից
 իրենց ծանր աշխատանքով: Եւ գիւղացիներն ստիպւած
 են ամեն բանի համաձայնել, որովհետեւ ոչ մի կերպ չեն
 կարող եօլա գնալ առանց հողի:

Իսկ եթէ հողը կարելի չը լինէր ոչ առնել, ոչ էլ
 ծախել. եթէ թոյլատրւած չը լինէր հողն անձնական
 սեփականութիւն դարձնել. եթէ հողը պատկանելիս լի-

նէր ոչ թէ այս կամ այն առանձին մարդուն, այլ ամ-
 բողջ աշխատաւոր ժողովրդին, իբրև նրանց ընդհանուր
 կերակրող-մայրը, — այն ժամանակ չէր էլ լինիլ այնպէս,
 որ մի մարդ իշխանութիւն ունենար միւսներէ վրայ.
 այն ժամանակ Անտօնն այլ ևս չէր կարող ստիպել գիւ-
 ղացիներին աշխատել իրեն համար, այն ժամանակ ամեն
 մի գիւղացի կաշխատէր իրեն և իր ընտանիքի համար և
 չէր գնալ ուրիշներէ համար աշխատելու. այն ժամանակ
 ոչ ոք չէր կարող ապրել ու հարստանալ ուրիշի աշխա-
 տանքով, ոչ ոք չէր կարող ուրիշի ձեռքով իր տունը
 շինել:

Ահա թէ ինչ է նշանակում հողի սեփականութիւն:
 Այդ նշանակում է՝ սեփականութեան իրաւունք ուրիշի
 աշխատանքի վրայ: Միայն հողն ինքն իրեն առանց աշ-
 խատանքի հաց չէ բացնում. ուրեմն անօգուտ կը լինէր
 հող ունենալը: Բայց ով հողի տէր է, նա ամեն բան
 իր ձեռքումն է պահում: Այդ միևնոյնն է, թէ մէկը կա-
 րողանար ինչքան ջուր կայ փակել կողբէքով ու բանա-
 լին գրպանը դնել. Մարդիկ կը սկսէին տանջել ծարա-
 ւից, իսկ ջուրը փակողը կատէր նրանց. «Աշխատէք ինձ
 համար, այն ժամանակ ջուր կը տամ. իսկ եթէ չէք ու-
 գում — դա ձեր բանն է. ես ձեզ չեմ ստիպում»: Հէնց
 այդպէս էլ պմեն մի հողատէր ստիպւած է գիւղացինե-
 րին աշխատել իրեն համար նրանով, որ հողի տէր է, որ
 հողն իր ձեռքին է: Նա ինքը ոչինչ չի անում, ման է
 դալիս իր քէֆին. իսկ նրա համար աշխատում են հա-
 հարիւրաւոր մարդիկ, որոնք հող չունեն: Նա հարստու-
 թիւն է դիզում, իսկ նրանք, այդ աշխատաւոր գիւղա-
 ցիները, հազիւ են կերակրւում:

Որտեղից է դիզում նրա հարստութիւնը: Պարզ է,
 իհարկէ, որ ուրիշի աշխատանքից: Եթէ ամեն մի գիւ-

դացի աշխատէր իրեն համար, այն ժամանակ այդ հարըստութիւնը կը բաժանուէր բազմաթիւ գիւղացիական ընտանիքներէ վրայ. իսկ այժմ գիւղացի ընտանիքներն ստանում են միայն այնքան, որ հազիւ են կարողանում ապրել, իսկ մնացած բոլոր հարստութիւնը, որն ստացւել է հողից գիւղացիական աշխատանքի միջոցով, մըտնում է հողատիրոջ գրպանը:

— «Բայց դէ նա է հողը գնել, չէ՞. ուրեմն պիտի իր ծախքերը հանի, իր տւած փողը յետ ստանայ» — այդպէս կասեն խելօք մարդիկ:

Այդ խելօք մարդկանց մենք այսպէս կը պատասխանենք. հէնց ամբողջ ցաւն էլ նրանումն է, որ նա կարող էր հող գնել. և այդ պատճառով նա այժմ հանո մ է ոչ միայն իր ծախսածը, այլ դեռ նոր փող էլ է դատում: Ասենք թէ մինչև անգամ, որ նա հողը գնել է իր հալալ դատած փողով, այլ ոչ խաբէբայութեամբ, ինչպէս Աստօնն է արել. և ասենք թէ նա տւել է այդ հողին հատուց ըրուելի: Բայց անա նա յետոյ այդ հողը կապարով է տալիս և տալու է, ասենք, քսան տարի շարունակ, տարեկան յիսուն ըրուելով: Ուրեմն նա կը ստանայ կապարեկին դարձեալ հազար ըրուելի. իսկ յետոյ նա կրկին կարող է ծախել այդ հողը իր առաջին գնով և կը ստանայ նորից մի հազար ըրուելի էլ: Ասել է թէ նա կը ստանայ իր հողից ընդամենը երկու հազար ըրուելի, բայց չէ՞ որ նա գնել է հողը միայն մի հազար ըրուելով: Իսկ հազար ըրուելին: Իսկայպէս, հօ երկնքից չէ՞ ընկել:

Ահա այդ միւս հազար ըրուելին է հէնց, որ ստանում է հողատէրը ուրիշի աշխատանքի շնորհիւ. նա խլում է այդ փողը այն շարքաշ աշխատաւորներից, որոնք մշակում են նրա հողերը, իսկ իրենք ստանում

են միայն այնքան, որ հազիւ են կարողանում կերակրել: Սրանից մենք տեսնում ենք, որ խելօք մարդիկ բողբոլվին ճիշտ չեն դատում, երբ ասում են, թէ հողատէրը յետ է ստանում միայն իր ծախսած փողը: Նրա փողը հէնց իր մօտն էլ մնացել է. նա միայն փոխել է այդ փողը հողի հետ, իսկ յետոյ, երբ ուզենայ, կարող է նորից փոխել հողը հէնց նոյն փողի հետ: Բանն ուրեմն դրանում չէ, այլ նրանում, որ ով շատ հող է գրնում, նա ձեռք է բերում իշխանութիւն միւս գիւղացիների վրայ և հնարաւորութիւն է ստանում հարստանալու ոչ թէ իր, այլ ուրիշի աշխատանքով, որովհետև կարող է ստիպել ուրիշներին աշխատել իրեն համար, իսկ այդ նա կարող է անել այն պատճառով, որ հողը անհրաժեշտ է բոլոր աշխատաւոր մարդկանց ապրելու համար, իսկ նա, այսինքն հողատէրը, այդ հողը մենակ իրեն ձեռքն է գցում, իր համար է ժողովում:

Ահա թէ ինչ է նշանակում հողի սեփականութիւն: Կրկնում ենք, այդ կը նշանակի սեփականութեան իրաւունք ուրիշի աշխատանքի վրայ: Գիւղացիները մշակում են հողը, իսկ ուրիշները, այսինքն կալւածատէրերը, խլում են նրանցից մի երրորդ մասը կամ կէսը, իսկ երբեմն մինչև անգամ երկու երրորդ մասը այն բոլորի, ինչ որ ստանում են աշխատաւորները հողից. մի խօսքով, նրանցից խլում են այնքան, որքան կուզեն, որովհետև անհող գիւղացին ամեն բանի պիտի համաձայնի: Եւ այդպէս է լինում տարեց տարի:

Ասենք, առաջայ ժամանակները դեռ աւելի վատ էր: Առաջ կալւածատէրերը աէր էին ոչ միայն հողին, այլ և հէնց իրենց գիւղացիներին: Հէնց այդպէս էլ ասում էին այն ժամանակի քրիստոնէական գիւղացի, այն ինչ

10731-57



կալաճատէրը՝ այնքան ջան և այն: Կալաճատէրերը կարող էին ծախել իրենց գիւղացիներին կամ փոխել թագի շների հետ. կարող էին մինչև անգամ բաժանել հայրերին ու մայրերին նրանց երեխաներից: Իսկ որ ամենագլխաւորն է, նրանք կարող էին քամել գիւղացիներին նրանց ամբողջ բանւորական ոյժը:

Այն ժամանակ գիւղացիներին խարազանով դուրս էին քշում իրենց սներից աղայի համար բանելու: Այն ժամանակ դեռ կալաճատէրը կարող էր բանեցնել գիւղացուն այնքան, որքան իր քէֆը կուզէր. և շատ անգամ գիւղացին ուժասպառ լինելուց մեռնում էր. քիչ չէր սպասում, որ աղան այնքան էր ծեծել տալիս գիւղացիներին, որ նրանք փայտի տակ իրենց շունչն էին փչում: Այն ժամանակ կալաճատէր աղան իրաւունք ունէր այդ ետիրութիւն էր Ռուսաստանում և անւսնում էր «ճորտերութիւն էր Ռուսաստանում և անւսնում էր շատ տատրական իրաւունք»: Այդ բանը Ռուսաստանում շատ երկար տևեց, համարեա երեք հարիւր տարի. բայց վերջապէս պիտի չքանար մեր երկրի երեսից:

Արդէն չափից դուրս դժւար էր դարձել գիւղացիներին համար շարունակել իրենց այդ ճորտական կեանքը. ամեն տեղ սկսեցին գիւղացիական յուզումներ, շարժումներ, և քանի գնում էր, աւելի շատ էին պատահում այնպիսի դէպքեր, երբ գիւղացիներն սպանում էին իրենց անգութ կալաճատէրերին և այրում էին նրանց տուն և տեղը: Վախ կար, թէ բոլոր գիւղացիները մի ընդունուր ապստամբութիւն, բունտ կը սարքեն: Եւ հէնց համար ժամանակ կատարեց գիւղացիների ազատութիւնը. դա 1861 թւի փետրւարի 19-ին էր:

Իրանից քիչ առաջ, նոր թագաւոր Ալեքսանդր երկրորդը, որը գահ բարձրացաւ Նիկոլայ առաջինից յետոյ,

ասել էր Մօսկւայի ազնւականներին, որ հարկաւոր է շտապել աղատել գիւղացիներին վերեից, թէ չէ իրենք գիւղացիները կաղատեն իրենց ներքեից: Ուրեմն աշխարայ անհրաժեշտութիւնն էր, որ ստիպեց այն ժամանակ թագաւորին տալ իր համաձայնութիւնը՝ ճորտատիրական իրաւունքը ոչնչացնելու համար: Իսկ մինչև որ այդ անհրաժեշտութիւնը չը կար, մեր թագաւորներն այնքան էլ չէին շտապում ազատել գիւղացիներին: Այդ ազատումից դեռ հարիւր տարի առաջ, Եկատերինա երկրորդ թագուհու ժամանակ, Ալեքսանդր Բագիշչէ անունով մի ուսեսալ մարդ մի գիրք էր գրել, որի մէջ նկարագրել էր գիւղացիների տանջանքները և պահանջում էր ոչնչացնել Ռուսաստանում ճորտութիւնը: Եկատերինա թագուհին հրամայեց այրել այդ գիրքը, իսկ իրեն Բագիշչէին աքսորել Միբիր: Նոյն օյինը բերին և Նիկոլայ Նովիկովի և այլ բազմաթիւ համարձակ մարդկանց գլխին, որոնք բարձրացնում էին իրենց ձայնը ստրուկ դարձրած ռուս ժողովրդի պաշտպանութեան համար: Ռուսաստանում, Նիկոլայ առաջինի ամբողջ թագաւորութեան ժամանակ, չէր կարելի մինչև անգամ ծպտուն հանել գիւղացիներին ազատելու մասին. այդ մասին ասած կամ գրած ամեն մի խօսքի համար ուղարկում էին Սիբիր կամ գինւոր էին դարձնում (սալգանթ էին տանում), իսկ գիւղացիներին ջարդում էին մտրակներով:

Բայց, վերջապէս, ինչպէս ասացինք, իրենք գիւղացիներն այլևս չը կարողացան համբերել: Նիկոլայ առաջինի թագաւորութեան վերջին տարիները գիւղացիները հէնց մի գլուխ սպանում էին իրենց կալաճատէրերին կամ իրենք էին հազարներով փախչում. 1841 թւին Մօզիլիի նահանգի միայն մի գաւառից փախել էին հազար հոգի ճորտեր, Կուրսկի նահանգի քառասուն վեց

կալւածից պատրաստուում էին փախչելու մօտ քսան հազար հոգի: Վերջապէս, շարունակ պատահում էին գիւղացիական բու՛նտեր, և նրանց հանգօտացնելու համար կառավարութիւնը զօրք էր ստիպւած լինում ուղարկել: 1848 թւին 26 նահանգի 54 կալւածում յուզումներ եղան: 1849 թւին կուրսկի նահանգում մի ահազին բու՛նտ եղաւ, որին մասնակցեցին բազմաթիւ կալւածների գիւղացիներ, թւով տաս հազա՛շ հոգի: 1852 թւին Չերնիգօվի և Տամբօվի նահանգներում գիւղացիները զիմադրութիւն ցոյց տւին նահանգապետին և զօրքին: կառավարութիւնն սկսեց վախենալ ընդհանուր ապստամբութիւնից—երկրորդ պուգաչօվշչինայից *):

Եւ անհ հէնց այդ ժամանակն էր, որ Սլէքսանդր երկրորդն ասաց Մօսկւայում ազնւականներին, թէ աւելի լաւ է ազատել գիւղացիներին վերելից, որպէսզի նրանք իրենք շագատեն իրենց ներքեից:

Բայց ինչպէ՛ս կատարեց, վերջապէս, գիւղացիների այդ ազատութիւնը վերելից: Ահա թէ ինչպէս. ազնւականները պիտի հրաժարուէին իրենց իրաւունքներից գիւղացիների ջանքերի վրայ, բայց նրանք պահանջեցին, որ գիւղացիներն ազատեն առանց հողի. սակայն թագաւորը չէր կարող համաձայնել այդ բանին. իսկապէս, ապա որտեղից պիտի գիւղացիները հարկ տային:

*) Պուգաչօվշչինա անւանում է այն մեծ գիւղացիական շարժումը, որը տեղի ունեցաւ արևելեան Ռուսաստանում եկատերինա երկրորդ թագուհու ժամանակ: Այդ շարժման գլուխն էր անցել կօզակ Պուգաչօվը: Սկզբում բաւական երկար ժամանակ աջողութիւնը Պուգաչօվի կողմն էր, որը վերջրեց բազմաթիւ բաղաճներ ու գիւղեր. բայց որովհետև շարժումը լաւ մտթիւ բաղաճներ ու գիւղեր. բայց որովհետև շարժումը լաւ մտթիւ չէր կազմակերպւած, կառավարութիւնը կարողացաւ յաղթել չէր կազմակերպւած: Մ. Թ. Պուգաչօվին: Նրան բռնեցին և դիտատեցին Մօսկւայում: Ծ. Թ.

Բայց ինչպէս երևում է, ազնւականների ցաւն աւելի մօտ էր կառավարութեան սրտին, քան գիւղացիները ցաւը. այդ պատճառով էլ կառավարութիւնը համաձայնեց թողնել ազնւականներին ամենալաւ հողերը, իսկ գիւղացիներին միայն այնքան հողաբաժին տւին, որ նրանք կարողանան թագաւորական հարկերը վճարել, բացի զբանից, գիւղացիներին ստիպեցին դեռ ամեն տարի այնքան փող տալ կալւածատէր ազնւականին, մինչև որ հանած կը լինեն հողի գինը: Հարկաւոր է ասել, որ հողի գինն էլ շատ բարձր էր նշանակւած: Այ հէնց այստեղից էլ երևաց, թէ ում համար է աւելի շատ հոգում կառավարութիւնը—գիւղացիների, թէ ազնւականների:

Իսկ ինչո՞ւ էր ազնւականներին հող թողնւած. ի՞նչ հիման վրայ: Հին ժամանակները ուսաց թագաւորները ազնւականներին հող էին բաժանում, գիւղացիներն էլ վրան, ոռճիկի փոխարէն: Այն ժամանակ բոլոր ազնւականները մինչև իրենց ծերանալը պարտաւոր էին կատարել զինւորական ծառայութիւն. և անհ նրանց տալիս էին բնակւած հողեր, որոնց եկամուտներով նրանք ապրում էին: Բայց որոշ ժամանակից յետոյ ուսաց թագաւորները ազատեցին ազնւականներին զինւորական պարտականութիւնից և դրին այդ պարտականութիւնը էլի նոյն գիւղացիների վրայ: Սակայն ազնւականներն առաջւայ նման շարունակում էին լինել հողի էլ, ճորտ գիւղացիների էլ տէրը, թէև այլևս ոչ մի ծառայութիւն պարտական չէին կատարելու: Բոլոր պետական ծանր պարտականութիւններն այժմ ընկան միայն գիւղացիների ուսերին. և կալւածատէրերին կերակրելը, և թագաւորական հարկերը, և զինւորական ծառայութիւնը: Այդպէս էին անհ այն արդարութիւնն ու շնորհը, որ կառավարութիւնը ցոյց տւեց դէպի ժողովուրդը!

Բայց ահա դահ բարձրացաւ, վերջապէս, մի թագաւոր (Ալէքսանդր երկրորդը), որը հասկացաւ, թէ գիւղացիներին այլ ևս չէ կարելի պահել ստրկութեան մէջ և թէ կամայ թէ ակամայ հարկաւոր է ազատել նրանց կալածատէրերից, ոչնչացնել ճորտատիրական իրաւունքը: Բայց ինչպէ՞ս կատարեց նա այդ: Ահա թէ ինչպէս գիւղացիներին տւեց ազատութիւն, բայց հողը պահեց կալածատէրերին. և դարձեալ գիւղացիներն ստիպւեցին աշխատել կալածատէրերի համար:

Ազատելով մի ձեռքով գիւղացիներին, միւս ձեռքով աւելի ևս պինդ կապկպեցին նրանց, որովհետև նրանցից խլեցին մինչև անգամ այն հողի ամենալաւ մասը, որից նրանք օգտուում էին ճորտութեան ժամանակ. դրանով գիւղացիներին նորից գցեցին կալածատէրերի ձանկը:

Ախր դէ հողի սեփականութիւնը միևնոյնն է թէ ճորտատիրական իրաւունքը՝ ով հող ունի, ամեն բան նրա ձեռքին է: Մինչև որ հողը կը մնայ ազնւականների և այն հարուստ վաճառականների ձեռքին, որոնք այժմ առնում են ազնւականների հողերը, մինչև այդ ժամանակ Ռուսաստանի բանւոր ժողովուրդը ազատ չի լինիլ. նա առաջւայ նման կաշխատի ու կը դատի ոչ թէ իրեն համար, այլ աղա կալածատէրերի: Ռուսաստանի գիւղացիներն այժմ բոլորովին դեռ ազատ չեն:

Այն ազատութիւնը, որ տւին նրանց 1861 թւին, իսկական ազատութիւն չէր. գործն այն ժամանակ միայն կիսով էր կատարւած. իսկական ազատութիւն բանւոր ժողովուրդը կոչենայ միայն այն ժամանակ, երբ նրա ձեռքին կը լինի ամբողջ Ռուսաստանի հողը. երբ այդ հողը նոյնպէս ազատւած կը լինի. երբ հողը դուրս կը գայ կալածատէրերի և վաճառականների ձեռքից, և

նրանից կարող կը լինի օգտուել ընդհանրապէս Ռուսաստանի համայն գիւղացիութիւնը:

Գիւղացիները պիտի անպատճառ այնպէս անեն, որ այլևս ոչ ոք իրաւունք չունենայ ոչ առնել, ոչ ծախել հողը. որ ոչ ոք իրաւունք չունենայ օգտուել հողից, եթէ ինքը չէ մշակում իր սեփական աշխատանքով:

Մենք գիտենք, որ հիմա մեր իշխանութիւնները, հարուստներն ու հողատէրերը լսել անգամ չեն ուզում այդ բանի մասին. նրանք այժմ Սիբիր են քստրում այն բոլոր մարդկանց, որոնք գրում կամ խօսում են այդ հարցի մասին: Բայց դէ չէ՞ որ մի ժամանակ էլ կառավարութիւնն ու կալածատէրերը ճորտութիւնը ոչնչացնելու մասին չէին ուզում լսել. կար ժամանակ, երբ նրանք Սիբիր էին քստրում այն մարդկանց, որոնք առնում կամ գրում էին, թէ ազնւականներն իրաւունք չունեն գիւղացիների ջանքի տէրը լինել, թէ նրանք իրաւունք չունեն առնել և ծախել գիւղացիներին, ինչպէս բանող անասունների: Բայց ահա բարձրացան համարձակ ձայներ. գիւղացիութիւնը յուզեց, և ճորտութիւնը խորտակեց:

Նոյնը կը լինի և հողի վերաբերմամբ. մենք գիտենք, որ արդէն այժմ էլ բազմաթիւ բաջ ու համարձակ մարդիկ չեն վախենում հողի մասին ճշմարիտ բաներն ասելուց. մենք գիտենք, որ արդէն այժմ էլ շատ բանւորներ ու գիւղացիներ սկսել են հասկանալ, թէ ինչու՞ն է իրենց զժբախտութիւնը. իսկ երբ կը յուզւի, կը շարժւի ամբողջ Ռուսաստանի ժողովուրդը և իրեն համար հող կը պահանջի, հնց այն ժամանակ էլ նա, վերջապէս, ձեռք կը բերի իսկական ազատութիւն:



« Ազգային գրադարան »



NL0210110



Լ ո յ յ Ե Ն Ի Տ Ե Ա Ե Լ

- 1. Բախ.—Հարուստներ և աղքատներ 11 սպաղ. 15
- 2. Պեշխիմով.—Հաց, լոյս և աղատութիւն 12
- 3. Փէրօրովիչ.—Ինչպէս են ժողովուած և ծախուած ժողովրդական փողերը . . . 5 »
- 4. Կնրմելիակ.—Նոր լերան քարոզը . . . 2 »
- 5. Չերնով.—Գիւղացին և բանւորը . . . 15 »
- 6. Պերներստորֆեր.—Ազգային հարցը և սօցիալ-դեմօկրատիան . . . 5 »
- 7. Պրամպօլինի.—Գիւղացիներին . . . 5 »
- 8. Ն. Թոփչեան.—Արհեստակց. միութիւններ 15 »
- 9. Մովստօրժակի.—Ինչ է իրաւական պետութ. 15 »
- 10. Ն. Կարանով.—Հողային հարցը Նոր Զեւանդիայում . . . 2 »
- 11. Ժան Ժօրէս.—Բուրժ. սեփականութիւնը և նրա ապագայ զրատումը . . . 5 »
- 12. Ա. Արեղեան.—Դեմօկրատ. ընկալութիւններ 12 »
- 13. Կարլ Կաստակի.—Ազգութիւնների հարցը Ռուսաստանում: . . . 3 »
- 14. Ահարոնեան(Ղարիբ) — Աղատութեան ճանապարհին: . . . 80 »
- 15. Թ. Լաստալ—Սահմանազրութեան էութեան մասին: . . . 5 »
- 16. Ա. Ն.—Ինչպէս կարելի է լուծել հող. հարցը 12
- 17. Վասիլիյ Գօլուրեվ.—Ինչ է ժողովրդապետութիւնը. . . 2 »
- 18. Ս. Զատարեան.—Վիճակագ. տեղ. դիւղ. ազգար. 25 »
- 20. Դիկշտէյն.—Ով ինչով է ապրում: . . . 7 »
- 21. Լ. Ն.—Մի զրոյց հողի մասին . . . 5 »

Տպագրուած են եւ շուսով լոյս կսեսնեն

- 1. Ալֆոնս Գիւնան.—Ժողովրդական օրէնսդրութիւնը դաշնակ. Զւիցերիայում:
 - 2. Վլադիմիր.—Պետական կազմութեան հիմքերը արեմուտքում:
 - 3. Լ. Շիշկօ.—Ազրարային ծրագրի հարցը և գիտական սօցիալիզմի տեսութիւնը:
- Պատրաստուած են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրքեր: